ջերմ բաղձանքներով լի երգի իւրաքանչիւր տունը վերջանում է հետեւեալ հարց ու պատասխանով.

«Դո՞ր բերեմ, դո՞ր բերեմ,

Ի Վանայ, Ոստանայ բերեմ»:

(Որտեղից կը բերեմ, որտեղի՞ց կը բերեմ, խոստացած առարկան, Վանից, Ոստանից կը բերեմ):

Այդ երգը գոյութիւն է ունեցել Ոստանի փառաւոր անցեալի հետ, այդ երգը լսելով, ես միշտ երեւակայում էի Ոստանը մի մեծ վաճառաշահ քաղաք, որ լի էր աշխարհի բոլոր բարիքներով: Բայց երբ հասանք, երբ իմ առջեւ ներկայացաւ աւերակների մի տխուր տեսարան, ես բոլորովին հիասթափ եղայ իմ մանկական փայլուն երազներից: Ոստանում ոչինչ չէր մնացել: Մի քանի ողորմելի խրճիթներ միայն երեւում էին ձորի մէջ, որոնց մէջ բնակւում էին նոյնքան ողորմելի քրդեր:

Ի՞նչ նպատակով բերեց մեզ այստեղ Ասլանը, մտածում էի ես, միթէ՞ միշտ պէտք է աւերակներ տեսնենք, միթէ՞ այդ երկրում չկար մի բան, որ փոքր ի շատէ մխիթարական լինէր:

Սարաւանդի բոլորովին սպառոածքի վրայ, որի ստորոտում ծփում էր ծովը, մենք ցած իջանք ձիերից: Այդ գագաթը իր բարձր դիրքով իշխում էր բոլոր շրջակայքի վրայ: Այստեղ էին թափոած հին ամրոցի բեկորները, որոնց քարակոյտը իմ վրայ այն տպաւորութիւնն էր գործում, կարծես դարերի կործանիչ սասանմունքից յետոյ այժմ մի հսկայական քարեղէն կմախք իր վիթխարի գլուխը վեր էր բարձրացրել, տեսնելու, թէ ի՞նչ էր կատարոել իր չօրէք կողմում...

Ոստան կոչւում էին այն քաղաքները, որոնց մէջ կա՛մ թագաւորի արքունիք կար, կա՛մ բարձր դիւան, ինչպէս ոստանիկ կոչւում էին արքունիքում ծառայող ազնականները: Այդ անունը ծագել է ասթան բառից, որ նշանակում է դուռն կամ շեմք:

Ոստանը Ռշտունեաց հզօր նախարարութեան մայրաքաղաքն էր: Բայց իր անմատչելի դիրքի պատճառով, որ մի կողմից պատսպարոած էր ծովով, իսկ միւս կողմից լեռներով՝ Ոստանը, միեւնոյն ժամանակ, ծառայում էր եւ որպէս ամուր բերդ:

Ռշտունեաց լեռնային աշխարհը մի ժամանակ սնուցանում էր իր մէջ իր ժայռերի նման ամուր եւ անխորտակելի մի ժողովուրդ: Նրա նախարարները Հայաստանի հարաւային սահմանապահ զօրքերի սպարապետի պաշ-